

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԵՎ
ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1913 թ. երկրորդ կես)

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

1913 թ. դարնանը, Հայկական հարցի վերաբացման շրջանում, Արևմտյան Հայաստանից ստացված թե՛ անգլիական և թե՛ ռուսական հյուպատոսների հաղորդագրությունները վկայում էին այն մասին, որ հայերի նկատմամբ գործադրվող բռնությունները շարունակվում էին:

Հայկական վիլայեթներում խաղաղություն հաստատելու գործում մեծ տերությունների շարքում տվյալ պահին բոլորից առավել շահագրգռված էր Ռուսաստանը: Դա բացատրվում էր ոչ միայն Ռուսաստանի և Թուրքիայի միջև ընդհանուր սահմանի և Ռուսաստանում բազմաքանակ հայ բնակչության առկայությամբ, այլև Փոքր Ասիայում Ռուսաստանի գերակայության ապահովմամբ: Ռուսաստանը, որի քաղաքական շահերը համընկնում էին արևմտահայերի պահանջների հետ, իր ձեռքը վերցնելով բարենորոգումների քննարկման նախաձեռնությունը, հանդիպեց Թուրքերի դիմադրությանը, որոնք հնարավոր բոլոր միջոցները գործադրեցին Հայկական հարցի քննարկումը տապալելու համար: Հանձինս Գերմանիայի Թուրքերը գտան իրենց «խելացի» աջակցին:

Եռյակ դաշինքի բացահայտ դիմադրության հետ մեկտեղ Անգլիայի երկակի քաղաքականությունն իր հերթին նպաստեց ռուսական դիվանագիտության պարտությունը Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների նախագծի քննարկման ժամանակ, որը 1913թ. հունիսի 3-24-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ անցկացվեց վեց մեծ տերությունների ներկայացուցիչներից կազմված «Հայկական բարենորոգումների հանձնաժողովի» կողմից⁴: Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում ավստրո-հունգարական դեսպանատան շենքում:

1913 թ. օգոստոսի 6-ին Ռուսաստանի արտգործնախարար Ա. Աադոնովը տեղեկացնում էր գերմանական կառավարությանը Հայկական հարցի վերաբերյալ Ռուսաստանի մշտական հետաքրքրության մասին, որն անհրաժեշտ էր, ըստ Սադոնովի, «կենդանացնել իր մեռած դրությունից»¹: Ս. Սադոնովը նշում էր, որ Ռուսաստանը չի ձգձգելու գործը, որպեսզի Բ. Դուռը չենթադրի, թե ամեն ինչ վերջանալու է միայն խորհրդակցություններով և որ ռուսները լուրջ չեն սլնդելու իրենց պահանջների վրա:

Ստեղծված իրավիճակը Գերմանիայի համար նույնպես շահեկան չէր: Գերմանական կառավարությունը, ընդունելով Սադոնովի առաջար-

1 С. Д. Са з о н о в. Воспоминания. Берлин, 1927, с. 159.

կուլթյունները, իր պատրաստակամությունն էր հայտնում համաձայնության գալ հայկական բարենորոգումների հարցում²:

Գերմանիայի համաձայնությունը բխում էր հետևյալ նկատառումներից. 1) թույլ չտալ Ռուսաստանին բարենորոգումների խնդրում նախաձեռնությունն ամբողջովին պահել իր ձեռքում և ամրապնդվել Փոքր Ասիայում, 2) չահել հայերի համակրանքը, 3) ցույց տալ թուրքիային, որ գերմանական գիվանդիտությունը զսպել է Ռուսաստանի՝ ավելի լայն բարենորոգումներ անցկացնելու ձգտումները:

Մինչ հիմնական կողմերի՝ Ռուսաստանի և Գերմանիայի միջև համաձայնություն քայլեր կիրառործվեին, Անտանտի մյուս անգամները շատ ուշադիր, բայց և պասսիվ հետևում էին գործողությունների զարգացմանը: Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների հարցում անգլիական կառավարության ցուցաբերած պասսիվությունը չէր նշանակում, թե Անգլիայի և թուրքիայի հարաբերություններում ընդհանրապես պասսիվություն էր տիրում: Իրավիճակը ճիշտ հակառակն էր: Միջազգային լարված վիճակն ու պատերազմի սպառնալիքը թելադրում էին Անգլիային չվատթարացնել հարաբերությունները թուրքիայի հետ: Այդ ժամանակահատվածում, երբ Անգլիայի հիմնական հակառակորդ Գերմանիայի նկրտումները՝ Անգլիայի գաղութներին տիրանալու ձգտումները գնալով խստանում էին, Անգլիայի շահերից բխում էր ի դեմս թուրքիայի տեսնել եթե ոչ դաշնակցի, ապա գոնե բարեկամի և ոչ հակառակորդի: Անգլիական կառավարությունը ձգտում էր թուրքիայի ասիական շրջանների ամբողջականության պահպանմանն ուղղված իր քաղաքականությունը ավելի բարելավել հարաբերությունները թուրքիայի հետ՝ միևնույն ժամանակ հույս տածելով կանխել եռյակ գաշինք – Օսմանյան կայսրություն հարաբերությունների հետագա սերտացումը:

Թուրքիան նույնպես չահազրգուցված էր Անգլիայի հետ լավ հարաբերություններում, որն անհրաժեշտության գեպքում կարելի էր օգտագործել Անգլիայի ապավինությանը գիմելու համար (գերմանամետ քաղաքականությունը չէր նշանակում, թե թուրքական կառավարությունը լիովին վստահում էր Գերմանիային և վերաբերվում էր նրան առանց վերապահության):

1913 թ. երկրորդ կեսին անգլո-թուրքական հարաբերություններում երկու տերությունների շահերից բխող ակտիվությունը հանգեցրեց նրանց միջև մի շարք հարցերի շուրջ համաձայնությունների ստորագրմանը, որոնց վերաբերյալ տարիներ շարունակ համաձայնություն չէր կայացվել³: Անգլիային արվող զիջումների և նոր առաջարկությունների միջոցով

² Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 г. — 10 мая 1914 г., Пг., 1915, с. 83—84 (далее — Реформы в Армении...); Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник док. под ред. В. Микаеляна. Ереван, 1995, с. 110, 114 (далее — Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919)).

³ Անգլո-թուրքական համաձայնագրի մասին տե՛ս Ю. В. К л ю ч н и к о в, А. С а б а н и н. Международная политика в договорах, нотах и декларациях. Ч. 1, М., 1925, с. 319; Г. Л. А р ш. Британская дипломатия и миссия Лимана фон

Թուրքիան նաև ձգտում էր Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների հարցում Անգլիայի «հովանավորական» միջամտությունը հայերի նկատմամբ նվազագույնի հասցնել: Այսպիսով, Հայկական հարցում Անգլիայի ակտիվության նվազումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ անգլո-թուրքական հարաբերություններից բխող նոր գրսևորում:

Հայկական հարցի նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների ցուցաբերած պասսիվությունը ցարական կառավարության շրջաններում առաջ էր բերում ոչ միայն անբավականություն դաշնակիցների բռնած դիրքից, այլև կասկած, թե որքանով նպատակահարմար էր առհասարակ համագործակցությունը նրանց հետ: Ռուսական գիվանագիտությունը չհապաղեց զգացնել տալ այդ մասին, անգամ փորձելով վախեցնել նրանց ռուս-գերմանական մերձեցման հեռանկարով⁴:

Ռուսաստանի նման տրամագրությունները փոքր-ինչ սթափեցրեցին բրիտանական դիվանագետներին և մի որոշ ժամանակով կրկին վերականգնեցին նրանց աշխուժությունը Հայկական հարցի նկատմամբ: Բացի այդ, Անգլիայի արտգործնախարարությունը չէր կարող անտարբեր մնալ 1913թ. օգոստոսի 4-ին և 5-ին Թուրքիայից անգլիական դեսպանության հաղորդած տեղեկությունների նկատմամբ այն մասին, թե Ռուսաստանը ռազմական ուժեր է կենտրոնացնում Թուրքական սահմանի մոտ և նպատակ ունի ներխուժել Արևմտյան Հայաստան⁵:

Անգլիայի կառավարության առջև, թեև ոչ շատ զգալի, բայց և այնպես խնդիրներ էին առաջացել. մի կողմից Ռուսաստանի հետ հարաբերությունները չլարելու ձգտումը, մյուս կողմից՝ Ռուսաստանի ձգտումների և ցանկությունների մի մասի սահմանափակումն ու մյուս մասի սաստումը: Միևնույն ժամանակ անգլիացիները ուզում էին լուծել հայերի առջև չհեղինակազրկվելու խնդիրը: Այս նպատակներով էլ 1913թ. օգոստոսի կեսերին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը Լոնդոնում Թուրքիայի դեսպան Թեֆիկ փաշային ներկայացնում է Արևմտյան Հայաստանում կատարված ոճրագործությունների ցուցակը⁶: Անգլիական դիվանագետները Թուրքական դեսպանի ուշագրությունը հրավիրում էին այն վտանգի վրա, որ սուլառնում էր Թուրքիային և նրա արևելյան նահանգներին նման «ցավալի» իրադարձությունների կրկնության դեպքում: Հիշյալ շրջաններում տիրող ոչ խաղաղ ու վտանգալից գրությունը կարող էր օտար միջամտության առիթ տալ: Բրիտանական կառավարությունը Թուրքիայի անձեռնմխելիության վերաբերյալ իր մտահոգվածությունն ու ցանկություններն արտահայտելով Թուրքական դեսպանին, խորհուրդ էր տալիս Բ. Դուանը անհապաղ քննություն կատարել և պատժել մեղավորներին:

Ատանալով Թեֆիկ փաշայի հաղորդագրությունը Լոնդոնից, մեծ վեզիրը վերոհիշյալ ցուցակը ներկայացրեց երեք նախարարությունների

Сандерса. — Вестник ЛГУ, 1949, N 11, с. 12; Philip Graves. Briton and Turk. London and Melbourn, 1940, pp. 181, 184.

4 Հայ ժողովրդի պատմություն 8 հատորով, Հ. 6, Երևան, 1981, էջ 532:

5 Public Record Office (London), FO, 195 / 2375, pt. 5, p. 113 (այսուհետև՝ FO).

6 FO, 195 / 2375, pt. 5, pp. 8-14; Архив внешней политики России (далее — АВПР), ф. Политархив, 1913, л. 3464, л. 58.

(ներքին գործերի, ռազմական և արգարադատություն), կարգադրելով ընդամին ձեռք առնել հնարավոր բոլոր միջոցները բավարարելու Անգլիայի ցանկությունը և ներկայացնել կատարված քննությունների արդյունքները՝ բրիտանական կառավարությունը հաղորդելու համար⁷:

Սակայն այս ամենին չհաջորդեց Անգլիայի հետեողականությունը, որի պատճառն էր տվյալ պահի համար անգլիական դիվանագետների կատարած հաշվարկը՝ սպասողական և դիտորդի դիրքի գրավումը: Ժամանակն ու գեպքերի զարգացման մոտակա ընթացքը պետք է օգնեին անգլիացիներին կողմնորոշվելու ստեղծված երկընտրանքի միջև. 1) հայերի շահերից բխող որևէ գործնական քայլի գիմել, թե 2) ձեռնպահ մնալ ցանկացած քայլից, որ կարող էր հարուցել Գերմանիայի անհավանությունը: Այս պայմաններում արտգործնախարարությունը ներկայացուցիչներից ոմանք ավելի շատ առավելություններ էին տեսնում մեկ այլ քայլի մեջ. այն է՝ ընդհանրապես գուրջ գալ հայկական բարենորոգումների քննարկումների ասպարեզից: Սակայն այս քայլը շատ կտրուկ ու վճռական կլիներ և իր հերթին կհանգեցներ Անգլիայի համար մի շարք անցանկալի ու անբարենպաստ հետևանքների⁸. 1) Անգլիան կլարեր հարաբերությունները Եռյակ միություն՝ մասնավորապես Գերմանիայի հետ, 2) կառաջանար Ռուսաստանի դժգոհությունը, 3) ձեռնտու և շահավետ կլիներ Թուրքիայի համար, 4) հայերին կհանգեցներ այն կարծիքին, թե անգլիացիները թողել են հայերին ճակատագրի քմահաճույթին:

Նկատի ունենալով նշված հանգամանքները, Անգլիայի արտգործնախարարությունը ղեկավարները գերադասում էին սպասել և տեսնել, թե ինչով էին ավարտվելու հայկական բարենորոգումների խնդրի վերաբերյալ սկսված ռուս-դերմանական նախնական քննարկումները: Անգլիական գիվանագետները խնդրի դրական որևէ լուծման ակնկալիք չունեին: Նման համոզմունքը հետևանք էր ոչ թե այն բանի, որ դժվար էր հաշտեցնել տերությունների իրարամերժ տեսակետները, այլ նրա, որ ինքը Թուրքիան դժվարանում էր համագործակցել բարենորոգումների ծրագրի հարցում: Այս հանգամանքը, հատկապես ստեղծված պահին, երբ թուրքերը ոգևորված էին Բալկանյան երկրորդ պատերազմում իրենց հաջողություններով, անհավանական էր թվում անգլիացիներին: Ինչևէ, Ռուսաստանն ու Գերմանիան, ստանալով տերությունների համաձայնությունը⁹, բանակցություններ են սկսում հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու շուրջ:

Ռուսական դիվանագիտությունը, ոչ մի աջակցություն չստանալով Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, ստիպված էր փոխգիշման գնալ վիլհելմ Երկրորդի կառավարության հետ: Կայզերական կառավարությունը 1913 թ. սեպտեմբերին Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների նոր ծրագիր էր առաջ քաշում՝ միջին ծրագիր Թուրքիայի և Ռուսաստանի

7 FO, 195 / 2375, pt. 5, p. 13.

8 British Documents on the Origins of the War, 1898–1914. Vol. 10, part 1, L38, London, 1936, N 567 (այսուհետև՝ BDOW).

9 R. D a v i s o n. The Armenian Crisis 1912–1914. New York, 1948, p. 20; Д ж е - м а л ь п а ш а. Записки Джемаль паши 1913–1919. Тифлис, 1923, с. 81.

առաջարկներին: Համաձայնության հասնելու նպատակով երկու տերուլթյուններն էլ գնացին փոխգիջումներ¹⁰: Ռուսաստանը համաձայնեց Արևմտյան Հայաստանի բաժանմանը երկու սեկտորի, այն էլ ոչ ուղղահայաց, այլ հորիզոնական գծով ինչպես առաջարկում էին գերմանացիները, ելնելով թուրքական ծրագրից: Ի պատասխան, գերմանացիներն այլևս չէին առարկում, որպեսզի օտարերկրացի ընդհանուր վերատեսուչներ նշանակվեն մեծ տերուլթյունների համաձայնությամբ: Գերմանացիները նաև համաձայնել էին ներկայացուցչական ընտրողական ժողովներում, ինչպես նաև ընտրվող պաշտոններում մահմեդականների և քրիստոնյաների հավասարության սկզբունքի հետ:

Այսպիսով, երկու տերուլթյունների միջև վերսկսված բանակցությունները մոտենում էին ավարտի: 1913 թ. սեպտեմբերի 10-ին Կ.Պոլսում ուսական և գերմանական գեսպաններ Մ. Գիրսն ու Հ. Վանգենհայմը Արևմտյան Հայաստանի համար կազմեցին 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր, որը պատրաստվում էին ներկայացնել մեծ վեգիրին¹¹:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ստեղծված պայմաններում Հայկական հարցը կրկին սկսել էր գրավել մեծ տերուլթյունների ուշադրությունը, Ռուսաստանի արտգործնախարարությունը անհրաժեշտ էր գտնում հիշյալ հարցի կապակցությամբ իրենց կատարած քայլերի մասին տեղեկացնել Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին¹²: Տերուլթյուններն իրենց հավանությունն էին տվել ուս-գերմանական ծրագրին¹³: Անգլիական կառավարությունը ողջունում էր հայկական բարենորոգումների շուրջ վերսկսված բանակցությունները¹⁴, իսկ արտգործնախարար է.Գրեյը Ռուսաստանի և Գերմանիայի միջև անմիջական բանակցությունների մեջ տեսնում էր Փոքր Ասիայում փոխադարձ շահերի բախման հողի վրա վտանգալից բարդություններից խուսափելու անհրաժեշտ միջոց¹⁵:

Պարզ չէ, թե որքանով էին իրական է. Գրեյի, ինչպես նաև արտգործնախարարության արտահայտած տրամագրություններն ու բարյացակամ վերաբերմունքը: Ընդհատ է, անգլիական դիվանագետներն իսկապես կողմ էին խնդրի լուծման որևէ չափավոր տարբերակի և ուս-գերմանական համագործակցությունը համարում էին խնդրի լուծման գործընթացում ևս մեկ քայլ: Սակայն է.Գրեյը իր գոհունակության արտահայտման միջոցով առաջին հերթին ձգտում էր մեղմել Ռուսաստանի գծագրությունը, որի սլաշմառն էր Անգլիայի կոցմից ցուցաբերած՝ դաշնակցին անհամապատասխան պասսիվությունը: Անգլիացիները, զգացնել տալով Ռուսաստանին, թե ամեն դեպքում պատրաստ են նրան աջակցել, փորձում

10 А. М а н д е л ь ш т а м. Младотурецкая держава. М., 1915, с. 50; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), с. 118.

11 Ռուս-գերմանական ծրագրի տեքստը տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. Երևան, 1972, էջ 276-277 (այսուհետև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության...):

12 Реформы в Армении..., с. 92, 95.

13 Будущее устройство Армении. По официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующей реформы в Армении (Дипломатический архив, т. 8). Пг., 1915, с. 41 (далее — Будущее устройство Армении...).

14 Реформы в Армении, с. 94.

15 Будущее устройство Армении..., с. 42.

էին հավաստիացնել, որ հիշյալ խնդրի լուծմանը պետք է մասնակցեին ամենաշահագրգռված տերութիւնները: Տվյալ հանգամանքով էլ անգլիացիները ընդհատուած էին իրենց ակտիվութեան սահմանափակումը¹⁶:

Անգլիայի արտգործնախարարութիւնում, միևնույն ժամանակ, տիրում էր այն կարծիքը, որ անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել տեսակետներն ու վերաբերմունքը բարենորոգումների խնդրի վերաբերյալ իրադարձութիւնների զարգացման նոր ընթացքին համապատասխան:

Մինչև ուսուցանական համագործակցութիւնը անգլիացիները կողմնորոշվում էին իրենց իսկ կողմից առաջ քաշած երեք պարտագիր պայմաններից ելնելով՝ այն է. տերութիւնների միաբանութիւնը բարենորոգումներն անցկացնելու հարցում, թուրքիայի կողմից բարենորոգումների նախագծի հոժարակամ ընդունում և բարենորոգումների շրջանակների համապատասխանեցում 1895 թ. նախագծին¹⁷: Այժմ իրավիճակը փոխվել էր: Արտգործնախարարութեան առաջին քարտուղար Հ. Նորմանը, հաշվի առնելով Կ. Պոլսում անգլիական դեսպանութեան նկատմամբ, առաջարկում էր հրաժարվել վերը նշված պայմաններից: Կ. Պոլսի դեսպանութեան կարծիքով այդ պայմանները ուղղակի բարդացրել և ավելի խճճել էին խնդիրը: Հ. Նորմանը գտնում էր, որ երրորդ պայմանից հրաժարվելու դեպքում անգլիացիները «խղճի ոչ մի խայթ չպետք է զգային»¹⁸, քանի որ հենց թուրքերը բարենորոգումների իրենց առաջարկած նախագիծում ավելի հեռու էին գնացել, քան 1895թ. նախագիծը: Երկրորդ պայմանի հետ կապված, Հ. Նորմանը այժմ չէր առարկում թուրքիայի նկատմամբ գործադրելիք հարկադրանքի դեմ, եթե, իհարկե, բոլոր տերութիւնները կողմ լինեին դրան և նրանց միջև կիրառվելիք հարկադրական միջոցների շուրջ համաձայնութիւն հաստատվեր: Ինչ վերաբերում էր առաջին պայմանին՝ տերութիւնների միաբանութեանը, ապա, ըստ Հ. Նորմանի, այն կարելի էր շրջանցել, քանի որ «դա ոչ այլ ինչ էր, քան տափակաբանութիւն»¹⁹ և դրանից հրաժարվելու ձևը հենց տվյալ խնդրի քննարկումներից իսպառ հրաժարվելն էր:

Արտգործնախարարութիւնում ստույգ գործելակերպը դեռ ձևավորված չէր: Այդուհանգերձ անգլիական կառավարութիւնն իր համաձայնութիւնն էր հայտնում Ռուսաստանի կառավարութեանը Բ. Դուան առաջ պաշտպանել Կ. Պոլսում ուսական և գերմանական դեսպանների կողմից մշակած բարենորոգումների ծրագիրը²⁰: Ընդ որում, արտգործնախարարութեան ղեկավարները ամենևին էլ չէին կարծում, որ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից ուսուցանական ծրագրի ընդունումը կարող էր նպաստել թուրքական կառավարութեան կողմից այդ ծրագրի ընդունմանը:

Ռուս-գերմանական ծրագիրը ղեկավարութեան հանդիպեց առաջին իսկ քայլից, երբ ուսական դեսպան Մ. Գիրսը մասնավոր գրութեամբ մեծ

16 BDOW, N 568.

17 BDOW, N 567, Minutes.

18 BDOW, N 567.

19 BDOW, N 567.

20 Реформы в Армении..., с. 96; АВПР, ф. Политархив, 1913, д. 3464, л. 55.

վեզիր Սալիդ Հալիմին հանձնեց ծրագրի վեց կետերը²¹: Թուրքերն իրենց դիմագրելու ընդունակ էին համարում, քանի որ օգտվում էին ինչպես Գերմանիայի բացահայտ (տվյալ պահին կարծես թե անիմաստ թվացող) հովանավորությունից, այնպես էլ Ֆրանսիայի և հատկապես Անգլիայի հաշվարկած պասսիվությունից խնդրի նկատմամբ: Թուրքիայի դիմագրողական ոգին բացատրվում էր նաև Բալկանյան երկրորդ պատերազմում ունեցած հաջողությունները՝ Ազրիանապոլսի վերագրավմամբ:

Ինչպես հայտնում էր Կ. Պոլսից անգլիական դեսպանության հավատարմատար Զ. Մարլինգը, «մեծ վեզիրը դրական կարծիք էր հայտնել ուսուցանողական ծրագրի կապակցությամբ, սակայն դա դեռ ոչինչ չէր նշանակում»²²: Այսինքն անգլիական ղիվանագետները համոզված էին, որ ուսուցանողական ծրագիրը հաջողություն չէր ունենալու:

Այն ժամանակ, երբ մեծ վեզիրը հանդիպում և բանակցում էր ուսական դեսպանի հետ, թուրքական կառավարությունը կրկին դիմում է իր ավանդական և փորձված խարդավանքին, նպատակ ունենալով՝ 1) եթե ոչ իսպառ տապալել, ապա, գոնև հետաձգել, խճճել բարենորոգումների խնդրի լուծումը, 2) տարածայնություններ առաջացնելով լարվածություն ստեղծել տերությունների միջև:

Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը դիմում է անդլիացիներին նոր առաջարկությամբ²³: 1913 թ. հոկտեմբերի 6-ին Թալեաթը, զրույցի հրավիրելով թուրքական կառավարության ֆինանսների և մաքսային նախարարության անգլիացի խորհրդական Ռիչարդ Քրոուֆորդին և թուրքական կառավարությանն առընթեր ծառայող Ռոբերտ Գրեյվսին, նրանց առաջարկում է Հյուսիս-արևելյան Անատոլիայի երկու սեկտորների համար նախատեսվող ընդհանուր վերատեսուչների պաշտոնները²⁴: Թուրքերը հատկապես ձգտում էին օգտվել Ռ. Քրոուֆորդի ծառայություններից, որի աշխատանքը թուրքիայի մաքսատանը դնահատում էին դերագանց: Թուրքական առաջարկությունը, սակայն, ոգևորություն չառաջացրեց Անգլիայի արտգործնախարարությունում: Իհարկե, Անգլիան ամենին դեմ չէր լինի ուսուցանողական ծրագրի հաստատման դեպքում ընդհանուր վերատեսուչների պաշտոններում անգլիացիների նշանակմանը: Սակայն տվյալ պահին, երբ թուրքերը ընդհանրապես դեմ էին ընդհանուր վերատեսուչի պաշտոնին, թուրքերի կատարած առաջարկը միայն կասկածներ էր հարուցում: Իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անգլիական կառավարության կողմից առաջարկի մերժումը լուրջ հիմքեր ուներ: Գլխավոր պատճառներից էր մյուս տերությունների, հատկապես Ռուսաստանի գեղարվեստի հարուցումը, ինչից անգլիացիները խուսափում էին: Բացի այդ, անգլիացիներին հայտնի էր, որ թուրքիայի առաջարկը կատարվել էր գերմանացիների խորհրդով, որոնք իրենց նպատակներն էին հետապնդում: Գերմանացիները ձգտում էին թուրքիա-

21 ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՊԿՊԱ), ֆ. 133, ց. 3, գ. 1011, թ. 14:

22 FO, 195/2375, pt. 5, p. 49.

23 R. Davison. Armenian Crisis..., p. 22; BDOW, N 569.

24 Joseph Heller. Britain and the Armenian Question. 1912–1914. A Study in Realpolitik – Middle Eastern Studies, 1980, N 16, p. 14.

յի ֆինանսների և մաքսատան ասպարեզում, որտեղ շատ կարևոր էր օտարերկրյա ազգեցությունը, ազատվել անգլիացի ծառայողներից և նրանց թափուր տեղերում տեղավորել Գերմանիայի ներկայացուցիչներին: Իսկ անգլիական ծառայողների նոր նշանակման արգյունքը անպայման բացասական կլինեի վերջիններիս համար: Փաստորեն, անգլիացիները կտեղափոխվեին մի այնպիսի ոլորտ, ուր, անկասկած, կհանգիստեին բազմաթիվ գովարուծյունների, որոնք էլ իրենց հերթին կհանգեցնեին Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացմանը:

Անգլիական գիվանագետները անհրաժեշտ էին համարում մինչ Բ. Դուանը պատասխանելը, տեղեկացնել ռուսական կառավարությանը Թուրքիայի առաջարկի մասին: 1913թ. հոկտեմբերի 14-ին Ջ. Մարլինգը տեղեկացնում է Բ. Դուանը իր կառավարության մերժման որոշման մասին: Ջ. Մարլինգը բացատրում էր, որ անգլիական կառավարությունը չի կարող մյուս տերություններից անկախ միակողմանի համաձայնություն կնքել Թուրքիայի հետ, քանի որ հայկական վիլայեթների համար նախատեսվող բարենորոգումների խնդիրն ամբողջությամբ քննարկվում էր բոլոր տերությունների կողմից: Անգլիական հավատարմատարը պեղացնում էր նաև, որ բարենորոգումների ծրագրի շուրջը առաջացած որոշակի և ընդհանուր համաձայնության ակնկալման իրավիճակում անգլիացի ծառայողները չէին կարող լիազորվել ստանձնելու առաջարկված պաշտոնները²⁵:

Ինչ վերաբերում էր Թուրքական կառավարության կողմից ռուս-գերմանական ծրագրի ընդունմանը, ապա գրտ հավանականությունը գնալով նվազում էր: Ինչպես նշում էր Ա. Գիրսը, 1913թ. հոկտեմբերի 16-ին արտգործնախարար Ս. Սազունովին ուղղված հեռագրում «ընդհանրապես Թուրքերը ձգտում էին թաղել Հայկական հարցը»²⁶:

Ռուս-գերմանական բանակցություններին հաջորդեցին ռուս-թուրքական բանակցությունները: Առջևում Ռուսաստանի գեսպան Մ. Գիրսի և մեծ վեզիր Սալիդ Հալիմի միջև վարվող բանակցություններն էին:

Այդ ընթացքում Թուրքիայի իշխանավորները նորանոր առաջարկություններ էին անում անգլիական կառավարությանը: Թուրքերը բացատրում էին այդ քաղաքականությունը նրանով, որ ցանկանում էին ստեղծված ռուս-գերմանական և ռուս-թուրքական բանակցությունների պայմաններում լավ հարաբերություններ պահպանել Անգլիայի և Ֆրանսիայի հետ, աշխատում էին հավաստել նշված տերությունների կառավարություններին, թե իրենց գլխավոր նպատակն է հայրենիքի ներքին բարեկեցության բարձրացումը և ռուսական վտանգից անջրպետվելը²⁷: Երիտ-թուրքերի սլարագլուխները շարունակում էին խուսանավել եվրոպական տերությունների գեսպանների հետ ունեցած զրույցներում, ձգտելով

25 FO, 195 / 2375, pt. 5, pp. 79, 80.

26 Реформы в Армении..., с. 43.

27 Д ж е м а л ь п а ш а. Записки..., с. 81.

հնուց որդեգրած քաղաքականության միջոցով մի կերպ պահպանել ոչ կայուն հավասարակշռությունը²⁸։

Հոկտեմբերի 17-ին Ջ. Մարլինգը տեղեկացնում էր է. Գրեյին, որ թուրքական կառավարությունը մտադրվել է Հայաստանում ժանդարմերիայի տեսչի պաշտոնին նշանակել անգլիացի գնդապետ Հոուքերին²⁹։ է. Գրեյն իր պատասխանում նշում էր, որ թուրքիայի համար ավելի լավ կլինեք տերությունների հետ բարենորոգումների ծրագրի քննարկումների ընթացքում ոչ մի նոր նշանակում չկատարել։ Սակայն անգլիացիների խորհուրդն անտեսվել էր։ Դեռ ավելին, Կ. Պոլիս ժամանած անգլիական նոր դեսպան Լ. Մալլեթը հոկտեմբերի 31-ին հաղորդում էր Լոնդոն թուրքերի մեկ այլ առաջարկության մասին :

Թուրքական կառավարությունը պատրաստվում էր Ռ. Քրոուֆորդին առաջարկել նախագահի պաշտոնն ոչ պաշտոնական մի հանձնաժողովում, որը կոչված կլինեք աջակցել բարենորոգումների թուրքական ծրագրի մշակման գործին³⁰։

Անգլիայի արտգործնախարարությունում մտահոգություն էր առաջացել։ Անգլիան, փաստորեն, կրկին կանգնած էր Հայկական հարցի մեջ ուղղակիորեն ներքաշվելու փաստի առջև։ Հայկական բարենորոգումների խնդրի գարգացման տվյալ փուլում դիտորդի դերը լիովին համապատասխանում էր Անգլիայի հետաքրքրություններին։ Ընդ որում այդ «դիտորդը» պատրաստակամություն էր ցուցաբերում մյուս տերությունների կողմից մշակված՝ Անգլիայի շահերին չհակասող ծրագրի պաշտպանության հարցում։ Այդ առերևույթ պասսիվությունը երևում է Կ. Պոլսի գերմանական դեսպան Հ. Վանգենհայմի՝ Գերմանիայի պետքարտուղարի օգնական Յիմմերմանին ուղղված այն հաղորդագրությունից, թե նշված օրերին, հոկտեմբերի վերջերին, «Ռուսաստանից բացի թուրքիային փաղաքշանքներով էին շրջապատում նաև Ֆրանսիան, Ավստրո-Հունդարիան և Իտալիան։ Միայն Անգլիան էր, որ կարծես թե հեռացել էր բեմից»³¹։ Այդուհանդերձ, Անգլիայի արտգործնախարարությունում գտնում էին, որ Ռ. Քրոուֆորդի նշանակումը նշված հանձնաժողովում կարելի էր հաստատել միայն այն դեպքում, եթե Բ. Դոուդը ընդունեք ռուս-գերմանական ծրագիրը³²։ Ինչպես ենթադրում էին անգլիական դիվանագետները, տվյալ ոչ պաշտոնական հանձնաժողովը կոչված էր ռուս-գերմանական ծրագրի մեջ մտցնելու որոշ, ոչ շատ կարևոր փոփոխություններ, որպեսզի հետո այդ ծրագիրը թուրքերի կողմից ներկայացվեք որպես իրենց սեփական ծրագիր։ Ատկայն, եթե թուրքիան նպատակ ունեք մերժել ռուս-գերմանական ծրագիրը և անգրագառնալ նոր, ամբողջովին այլ և գուցե նաև ոչ գործնական ծրագրի, որը հավանական է չէր հաստատվի ոչ Ռուսաստանի, ոչ էլ Անգլիայի կողմից, ապա ցանկալի չէր լինի, որ նման ծրագիրը ներկայացվեք Ռ. Քրոուֆորդի պատասխանատվության ներքո։ Բացի այդ, Ռ. Քրոուֆորդը

28 Д ж. К и р а к о с я н. Младотурки перед судом истории. Ереван, 1989, с. 151.

29 BDOW, N 577.

30 BDOW, N 573.

31 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), с. 128.

32 BDOW, N 573, 574.

դի նշանակումը կարող էր գիտվել որպես միակողմանի գործողություն Անգլիայի կողմից և հանգեցնել լուրջ բարդությունների:

Ելնելով նշված հանգամանքներից, Անգլիայի արտգործնախարարությունը որոշում կայացրեց հրաժարվել Բ. Դուան այս առաջարկությունից ևս³³: Նկատի առնելով, որ բարենորոգումների խնդրի հետ կապված նախաձեռնությունը գտնվում էր Ռուսաստանի և Գերմանիայի ձեռքում, անգլիացիները հարմար էին գտնում ետ կանգնել և հրաժարվել Թուրքիայի վարչական համակարգի վերակառուցման հետ կապված ցանկացած մեկուսացված գործողությունից:

Անգլիացիները իրենց որոշման մասին տեղեկացնում են նաև ռուսական, ֆրանսիական և գերմանական կառավարություններին և ձգտում են հավաստիացնել, թե «Անգլիայի ամենամեծ ցանկությունն էր ի վերջո լուծել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը»³⁴:

Թուրքական կառավարությունը, գեռևս անտեղյակ անգլիական կառավարության որոշմանը, համաձայն իր մտադրության 1913թ. նոյեմբերի սկզբին նոր նշանակում էր կատարել: Գնդապետ Հուլիանը նշանակվել էր հայկական վիլայեթների ժանդարմերիայի տեսչական կոմիտեի նախագահ, որին լայն լիազորություններ էին տրվել³⁵: Գնդապետ Հուլիանը նշանակման կապակցությամբ է. Գրեյը մեկ անգամ ևս խորհուրդ էր տալիս Բ. Դուանը ժամանակավորապես հետաձգել վարչական փոփոխությունները, հատկապես, եթե դրանք կրելու էին մշտական բնույթ և կապված էին անգլիական կամ այլ տերությունների ծառայողների նշանակման հետ³⁶: Բացի այդ, արտգործնախարարության կողմից դեսպան Լ. Մալլեթին հանձնարարվում էր Բ. Դուանը ներկայացնել անգլիական կառավարության հետևյալ ցանկությունը. որքան հնարավոր է շտապ հաստատել բավարար ծրագիր հայկական վիլայեթների համար: Անգլիական կառավարությունը հուսով էր, որ Թուրքիայի կողմից ռուս-գերմանական ծրագրի ընդունումը մեծապես կնպաստեր օսմանյան կառավարության դիրքի ամրապնդմանը և կպահպաներ Ասիական Թուրքիայի ամբողջականությունը: Միաժամանակ անգլիական կառավարությունը տեղեկացնում էր, թե պատրաստ է հնարավորությունների սահմաններում աջակցել Բ. Դուանը, սակայն դժվարություններ էր կանխատեսում Թուրքական կառավարության համար, եթե տվյալ պահին նա առաջ քաշեր նոր, անկախ ծրագիր: Ավելին, եթե այդ ծրագրի իրագործման համար Թուրքերը նախատեսել էին դիմել ընդամենը մեկ ազգության օրինակ անգլիացիների օգնությանը, ապա տարածայնությունները, որ այդ դեպքում կառաջանային Անգլիայի և մյուս տերությունների միջև, լուրջ խոչընդոտներ կառաջացնեին նաև Թուրքական կառավարության համար³⁷:

Այսպիսով, անգլիական դիվանագետները, որոնք արդեն լիովին ընդունում էին Թուրքիայի նկատմամբ ճնշման գործադրման դադափա

33 FO, 195 / 2375, pt. 6, p. 80.

34 BDOW, N 576.

35 Armenia. Political and Ethnic Boundaries 1878–1948. Editor Anita L. P. Burdett, Archive Editions, London, 1998, p. 317.

36 FO, 195 / 2375, pt. 6, p. 91.

37 FO, 195 / 2375, pt. 6, p. 92.

րը³⁸, ձգտում էին թուրքերին հավաստել, որ միայն տերութունների բարի կամքի և փոխհամաձայնության շնորհիվ կարելի էր արգյունավետ օգտադործել օտարերկրյա օգնությունը:

Անգլիական կառավարության բոլոր ցանկություններն ու առաջարկները 1913 թ. նոյեմբերի 13-ին Լ. Մալլեթի կողմից ներկայացվել էին մեծ վեգիր Սալիդ Հալիմին: Զրույցի ընթացքում Լ. Մալլեթը ընդգծել էր եվրոպական հսկողության որևէ ձևի անհրաժեշտությունը, քանի որ միայն այդ դեպքում կարելի էր հավաստել ինչպես տերություններին, այնպես էլ Հայերին, որ բարենորոգումները կարող էին իրականություն դառնալ: Հասկանալով, որ Թուրքիայի հիմնական անհանդստությունը Ռուսաստանի նկրտումների հետ էին կապված, Լ. Մալլեթը փորձում էր մեծ վեգիրին հավաստիացնել, որ հենց Ռուսաստանի առաջարկած ծրագիրը, որը նախատեսում էր ընդհանուր եվրոպական հսկողություն, լավագույն երաշխիք կհանդիսանար ցանկացած տերության ոտնձգությունների դեմ³⁹:

Մեծ վեգիրի հետ ունեցած հանդիպումից հետո, Լ. Մալլեթը արտողործնախարարությունն է հայտնում իր համոզումները, որ թուրքական կառավարությունը վերջնականորեն մտազրկված է մերժել տերությունների կողմից կատարվող ցանկացած պահանջ և ձգտում էր բարենորոգումների իրականացման գործում որքան հնարավոր է քիչ դիմել օտարերկրյա օգնության⁴⁰:

Այսպիսով, մինչև անգամ թուրքամետ դեսպան Լ. Մալլեթը համոզվել էր, որ խնդիրը շատ անգամ ավելի ըարդ էր, քան նա պատկերացնում էր և գտնում էր, որ ստեղծված իրավիճակում ամենակարևորն էր խուսափել այնպիսի քայլերից, որոնք կարող էին առաջացնել Բ. Դուան դժգոհությունը⁴¹: Դեսպանը համարում էր, որ տվյալ պարագայում անհրաժեշտ էր բանակցությունների ընթացքը ամբողջովին թողնել Ռուսաստանի հայեցողությանը և չէր կասկածում, որ ռուսական դեսպանը ի վերջո կգտներ հարցի լավագույն լուծումը:

Բարենորոգումների գործը չտապալելու նպատակով Ռուսաստանը գեռ հոկտեմբերի վերջին համաձայնել էր վերատեսուչների փոխարեն խորհրդականների նշանակմանը: Սակայն մեծ վեգիրը հայտնել էր Մ. Գիրսին, որ նախարարների խորհրդում իր ներկայացված հարցերը լուրջ առարկումների են հանդիպել⁴²: Նոյեմբերի 27-ին Լ. Մալլեթը, տեղեկանալով Մ. Գիրսից, որ նրա և մեծ վեգիրի միջև կայացած նոր զրույցները կրկին անաբգյունք էին ավարտվել, աջակցման կարգով ռուսական դեսպանին առաջարկում էր իր միջամտությունը⁴³: Լ. Մալլեթը, ղեկավարվելով Անգլիայի արտողործնախարարության կարգադրություններով, պետք է փորձեր ազդել Սալիդ Հալիմի վրա և համոզեր նրան գնալ փոխգիջման⁴⁴:

38 FO, 195 / 2375, pt 6, p. 133.

39 BDOW, N 582; J. H e l l e r. Ibid., p. 17.

40 Реформы в Армении..., с. 107.

41 FO, 195 / 2375, pt. 6, p. 122.

42 BDOW, N 584.

43 BDOW, N 585.

44 FO, 195 / 2375, pt. 6, p. 147.

1913 թ. դեկտեմբերի 1-ին Սայիդ Հալիմի հետ Լ. Մալլեթի հանդիպումը բավականին բովանդակալից էր: Հասկանալով, որ Սայիդ Հալիմը անձամբ դեմ չէր եվրոպական խորհրդականների նշանակմանը, Լ. Մալլեթը պնդում էր այն առաջարկի վրա, որ մեծ վեզիրը բոլոր ջանքերը գործադրի Բ. Դուան կողմից ծրագրված ընդունելու ուղղությամբ: Դեսպանը նշում էր, որ անգլիական կառավարությունն այդ խորհուրդը տալով ոչ մի գաղտնի միտում չի հետապնդում: Անգլիացիները, ըստ Լ. Մալլեթի, դեկավարվում էին որքան հնարավոր է շուտ արևելյան նահանգներում բարձր կառավարում տեսնելու ցանկությամբ: Նա հայտնում էր անգլիական կառավարության այն համոզմունքի մասին, թե «Հայկական բնակչությունը պատշաճ կառավարման գեպքում Բ. Դուան համար կդառնար կայունության գործոն»⁴⁵: Լ. Մալլեթը բացատրում էր, որ հայերն անցյալում այնքան հիասթափություն են ապրել, որ այժմ առանց հիմնավոր երաշխիքների չեն կարող հավատալ բարենորոգումների արդյունավետությանը:

Սայիդ Հալիմը խոստացավ անել ամեն ինչ, որպեսզի ռուսական առաջարկություններին կառավարությունում վերաբերվեին հանդուրժողական ոգով: Լ. Մալլեթը լավատեսորեն էր սրամազրկած վեզիրի տված խոստումների հանդեպ: Սակայն մի քանի օր անց նա հաղորդում էր Լոնդոն, որ «Հանկարծակի հարցի ամբողջ ընթացքը փոխվել է, այն էլ ոչ դեպի լավը»⁴⁶: Խորապես ծանոթանալով Հայկական հարցին և անմիջականորեն բախվելով կատաղի հակահայկական գործողությունների⁴⁷, անգլիական դեսպանը խնդրի դրական լուծման հեռանկար չէր տեսնում: Նույնը կարելի է ասել Անգլիայի արտգործնախարարության մասին:

Անգլիայի արտգործնախարարության արևելյան դեպարտամենտի գրագիր Դեիդ Սքոթի կողմից Հայկական հարցի վերաբերյալ վերջին շրջանի ստացված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա կազմվել էր համառոտագրություն, որը ներկայացվեց քննարկման: 1913 թ. դեկտեմբերի 20-ին կայացած քննարկման ընթացքում անգլիական դիվանագետները փորձում էին մշակել տվյալ պահին և հազամանքներին առավել համապատասխան քայլեր: Նրանք հանգել էին այն եզրակացություն, որ Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների ծրագիրը ի հաճույս Թուրքիայի այն աստիճան էր արդեն փոփոխությունների ենթարկվել, որ հետագա ցանկացած կրճատում ամբողջովին վերջ կդնեք այդ ծրագրի գործնական արժեքին⁴⁸:

Արտգործնախարարությունում համոզված էին, որ եթե երբևէ որևէ բավարար ծրագիր ընդունվեր Թուրքիայի կողմից, ապա դա տեղի կունենար միայն բոլոր մեծ տերությունների գործադրած ընդհանուր ճնշման արդյունքում: Բայց և այնպես ընդհանուր ճնշման գործադրումն անհավանական էր թվում անգլիական դիվանագետներին: Այդ իսկ պատճառով էլ Լ. Մալլեթը արտգործնախարարությանը առաջարկում էր հետևյալը.

45 BDOW, N 586.

46 J. H e l l e r. Ibid., p. 18.

47 FO ,195 / 2375 , pt. 6, p. 45; BDOW, N 586: Ա. Ն ա ս ի պ յ ա ն. Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923. Պեյրութ, 1994, էջ 31:

48 BDOW, N 586.

ոուսական ծրագրի տապալման դեպքում պատասխանատվություն, բարենորոգումների իրագործման հետ կապված, չստանձնել և թողնել, որպեսզի երիտթուրքերը ինքնուրույն՝ սեփական ծրագրի հիման վրա, կաղմակերպեն և ապահովեն իրենց փրկությունը կամ հակառակը՝ կործանումը Արևելյան նահանգներում⁴⁹:

Արտգործնախարարությունն իր հավանությունն է տալիս Լ. Մալլեթի առաջարկությանը, հավանաբար ելնելով նրանից, որ այլ քաղաքական մոտեցում չէր տեսնում: Անգլիայի արտգործնախարարությունում գտնում էին, որ թուրքական կառավարության վրա ճնշման գործադրման հարցում ղեկավար գիրքը և բացահայտ աչքի ընկնելը չի համապատասխանում Անգլիայի հետաքրքրություններին, քանի որ անգլիական կառավարությունը չէր ցանկանում վնասել թուրքիայում իր դիրքերին և լուրջ հուզումների առիթ առաջացնել մահմեդական բնակչությանը իր գաղութներում, հատկապես Հնդկաստանում և Եգիպտոսում: Է. Գրեյը գտնում էր, որ այլընտրանք չկա, բացի Բ. Դուան տեսակետին համաձայնվելը: Նրա կարծիքով ավելի լավ կլիներ կրճատել ծրագիրը այն աստիճան, որ այն ընդունելի լիներ Բ. Դուան կողմից, քան պահպանել այն տարբերակը, որը դիմադրության տեղիք էր տալիս⁵⁰:

Նշված ժամանակաշրջանում, ինչպես վկայում էր իր հիշողություններում Ջեմալ փաշան, Բ. Դուանը ամեն կերպ աշխատում էր վերացնել թուրքիայի նկատմամբ Անգլիայի նախապաշարմունքները, վերականգնել այն հարաբերությունները, որ գոյություն ունեին թուրքիայի և Անգլիայի միջև մինչ անգլո-ուսական համաձայնագրի կնքումը և հասնել անգլո-թուրքական մերձեցման հաստատմանը⁵¹: Այս նպատակին հասնելու համար թուրքերը ձգտում էին բարեկամական կապեր հաստատել ոչ միայն Կ. Պոլսում անգլիական դեսպանի և դեսպանության մյուս անդամների, այլև բաղձալիկ նշանավոր անգլիացի քաղաքական գործիչների հետ: Թուրքերի հաշվարկած քաղաքականությունը հանգեց նրան, որ 1913 թ. զեկտեմբերի վերջին Անգլիան ամբողջովին հակված էր աջակցել Բ. Դուանը:

1914 թ. հունվարի կեսերին, թուրքերի հետ դերմանացիները, որոնք կրկին սկսել էին ընդգծված ակտիվություն ցուցաբերել բարենորոգումների քննարկումներին, նոր փորձ կատարեցին էլ ավելի բարդացնելու բանակցությունների առանց այն էլ ոչ սահուն ընթացքը: Նրանք մեղադրում էին ուսաններին նոր պահանջներ ներկայացնելու համար⁵²: Սակայն այդ մեղադրանքը չէր համապատասխանում իրականությանը: Ինչպես Լ. Մալլեթն էր տեղեկացնում Անգլիայի արտգործնախարարությանը, ուր կարծես թե բողոքի կարգով դիմել էին դերմանացիները, ոուսական դեսպան Մ. Գիբսը ոչ մի նոր առաջարկ չէր արել: Բայց և այնպես Լ. Մալ-

49 J. H e l l e r. Ibid., p. 18.

50 BDOW, N 586, Minutes.

51 Д ж е м а л ь п а ш а. Записки..., с. 84.

52 BDOW, N 588; R. D a v i s o n. Armenian Crisis..., p. 23.

լեթը հատուկ նշում էր, որ ռուսները սկսել էին անհանդուրժողականություն և խստապահանջություն հանդես բերել⁵³:

Բարենորոգումների քննարկման տվյալ փուլում Ռուսաստանի նման գրսևորումը հավանաբար թելադրվում էր Լիման ֆոն Սանդերսի նշանակմանը դեմ լինելու գիրքից: Այս մոտեցումն էլ իր հերթին առաջացրել էր Գերմանիայի դժգոհությունն ու անհանդստությունը: Գերմանիան ստիպված էր հորդորել թուրքերին զիջումներ կատարել բարենորոգումների խնդրում, քանի որ ձգտում էր վերջնականորեն հաստատել Լ. Սանդերսի ռազմական միսիան Կ. Պոլսում: Գերմանիայի դեսպան Զ. Վանդենհայմը երիտթուրքերի ուշադրությունը հրավիրում էր Հայկական հարցի և գերմանական ռազմական միսիայի միջև եղած կապի վրա և, իրավիճակը շտկելու նպատակով, նրանց հորդորում էր համաձայնվել Ռուսաստանի առաջարկություններին՝ ընդունել համամասնական ներկայացուցչությունը:

Անգլիական դիվանագետների համար գաղտնիք չէր այն դիվանագիտական խաղը, որ վարում էին տվյալ պահին Ռուսաստանը և Գերմանիան՝ օգտագործելով Հայկական բարենորոգումների խնդիրը իրենց հետաքրքրությունների համար: Այդուհանդերձ Լ. Մալլեթի հաղորդագրությունը այն մասին, թե Ռուսաստանի և Գերմանիայի միջև Կ. Պոլսում անհամաձայնության երևույթներ չկան, ամբողջովին համապատասխանում էր Անգլիայի արտգործնախարարության դիրքորոշմանը: Ստեղծված իրավիճակում Ռուսաստանի և Գերմանիայի միջև Հայկական հարցի շուրջ համաձայնությունը ձեռնտու էր Անգլիային: Բանն այն էր, որ Լ. Սանդերսի միսիայի հետ կապված՝ դեռ 1913 թ. նոյեմբերից Անգլիայի և Ռուսաստանի միջև լարվածության առաջացման սպառնալիք կար, որի պատճառը անգլիական կառավարության խուսափողական դիրքն էր ի պատասխան Ռուսաստանի՝ Կ. Պոլսում գերմանական ռազմական միսիայի հաստատմանը գիմադրելու խնդրանքին⁵⁴:

Այսպիսով, 1914 թ. հունվարի կեսերին Ռուսաստանի անհանդուրժողական դիրքը Հայկական հարցում անցանկալի էր և ձեռնտու չէր Անգլիային: Լ. Մալլեթը քննադատում էր ռուսական կեցվածքը և առաջարկում էր Անգլիայի արտգործնախարարությանը՝ համաձայնության եզրեր գտնելու առաջարկությամբ միջամտել Պետերբուրգում, քանի որ բարենորոգումների վերաբերյալ բանակցությունների ընդհատումը վտանգի տակ կդններ այն օգուտը, որ Ռուսաստանը կարող էր քաղել արդեն իսկ ձեռք բերած զիջումներից⁵⁵: Լ. Մալլեթի առաջարկին հաջորդեց Պետերբուրգում Անգլիայի դեսպան Զ. Բյուքենենի հանդիսվումը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սառոնովի հետ, որի ժամանակ անգլիական դեսպանն իր կառավարության անունից խորհուրդ էր տալիս ընդունել Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների վերջին ձևակերպումը⁵⁶:

53 BDOW, N 589, 590; Будущее устройство Армении..., с. 69.

54 Б. М. Х в о с т о в. История дипломатии. Т. 2, М., 1963, с. 761.

55 E. B. T a p л e. Европа в эпоху империализма. Соч. в 12 томах, т. 5, М., 1958, с. 261.

56 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 356:

1914 թ. հունվարի 26-ին Լ. Մալլեթը Կ. Պոլսից հեռագրում էր Անգլիական արտգործնախարարությունը, որ Ռուսաստանի և Բ. Դուան միջև, չնայած ներկայացուցչության կապակցությամբ նրանց միջև եղած տարաձայնություններին, համաձայնություն էր կայացել⁵⁷: 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Թուրքիայում ռուսական դեսպանության հավատարմատար Կ. Գուլկեխչը և մեծ վեզիր Սալիկ Հալիմ փաշան ստորագրեցին Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը⁵⁸:

Ռուս-թուրքական համաձայնագիրը տարբեր ձևով էր ընդունվել տերությունների կողմից: Գերմանացիները, ճիշտ է, համաձայնագիրը համարում էին Ռուսաստանի հաղթանակ, սակայն չէին կարող նաև չնշել թուրքական դիվանագիտության մեծ հաջողությունը, որին մեծագույնս նպաստել էին իրենք՝ գերմանացիները⁵⁹:

Ռուսական դիվանագիտությունը, հաշվի առնելով այն բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, որոնց դիմագրելով հասել էր համաձայնագրի տղ վերջնական ձևին, ընդունում էր, որ հունվարի 26-ի համաձայնագիրը ռուսական դիվանագիտության հաղթանակն էր: Ճիշտ է, ռուսները խոստովանում էին, որ համաձայնագիրը չէր տալիս հայերին ինքնավարության այն ընդարձակ իրավունքները, որ ուզում էր նրանց համար ապահովել ռուսական ծրագիրը, սակայն, ինչպես պնդում էր Գուլկեխչը, այդ պատճառով անկասկած մատնանշում էր նոր, ավելի բախտորոշ մի շրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմության մեջ:

Անգլիայի, ինչպես և Ֆրանսիայի գոհունակությունը հունվարի 26-ի համաձայնագրի վերաբերյալ բացատրվում է նրանով, որ երկարատև պայքարից հետո ոչ Ռուսաստանին, ոչ էլ Գերմանիային չհաջողվեց հիմնավոր իր դերակալությունը հաստատել Օսմանյան կայսրության նշված տարածաշրջանում: Այդուհանդերձ, ի տարբերություն թուրքամետ դեսպան Լ. Մալլեթի, որը չափից ավելի լավատեսորեն էր վերաբերվում բարենորոգումների հարցին և համարում էր այն լուծված, Անգլիայի արտգործնախարարությունում լավ էին հասկանում, որ եթե հունվարի 26-ի համաձայնագիրը փրկեց թուրքական կայսրությունը մասնատումից, իսկ տերություններն էլ իրենց բաժինը ղավթելու պայքարից, ապա հայերը այս անգամ էլ պարտվեցին: Անգլիացիների կարծիքով հունվարի 26-ի համաձայնագրից իրենց օգուտն էին քաղելու միայն Գերմանիան և Թուրքիան: Անգլիայի արտգործնախարարության մշտական քարտուղար Արթուր Նիքոլսոնի կարծիքով, այդ նախագիծը պարզապես պատկանում էր մինչ այդ մշակված այն հիանալի ծրագրերի շարքին, որոնցից ոչ մեկն էլ արդյունք չէր ունեցել⁶⁰:

57 BDOW, N 591.

58 Համաձայնագրի տեքստը տե՛ս Реформы в Армении..., с. 75-49; Հայաստանի միջազգային դիվանագիտության..., էջ 339-342.

59 R. D a v i s o n. Ibid., p. 24.

60 J. H e l l e r. Ibid., p. 20.

ДИПЛОМАТИЧЕСКАЯ БОРЬБА ВОКРУГ АРМЯНСКОГО ВОПРОСА И
ПОЛИТИКА АНГЛИИ
(вторая половина 1913 г.)

АРМЕНУИ ГАМБАРЯН

Р е з ю м е

С августа 1913 г. по 26 января 1914 г., в период русско-германских и русско-турецких переговоров вокруг Армянского вопроса, Великобритания вела по отношению к Армянскому вопросу свою традиционную политику. Безразличие к судьбе армянского народа английское правительство скрывало проявлениями интереса к Армянскому вопросу исходя из того, насколько в тот или иной момент переговоров проблема реформ в Западной Армении отражалась на интересах Великобритании. Позиция Великобритании, которая оставляла впечатление пассивности, невмешательства и полного удаления от обсуждений Армянского вопроса, была составной частью детально обдуманной политики правительства и дипломатов Великобритании. Правительство Великобритании не протестовало и даже способствовало принятию русско-германского проекта реформ со стороны турецкого правительства, а позднее, в период русско-турецких переговоров оказывало поддержку русским предложениям, так как они не противоречили интересам Великобритании. Действия Великобритании исходили из реальной политики, в данный момент соответствующей ее интересам, диктовались стремлением установления более или менее устойчивых отношений между великими державами.

THE DIPLOMATIC STRUGGLE ON THE ARMENIAN QUESTION AND THE
POLICY OF GREAT BRITAIN
(the second half of 1913)

ARMENOUHY GHAMBARYAN

S u m m a r y

In August 1913–26th of January 1914 during the period of Russo-German and Russo-Turkish negotiations on the Armenian question, Great Britain conducted her traditional policy. The British Government showed the interest towards the Armenian question as much as it affected her state interests. The passive position of Great Britain and her non-interference in the discussions of the problem of reform for Western Armenia was in fact the constituent part of in detail considered policy of the British Government and diplomats. The British Government did not deny and even contributed to the adoption of the Russo-German scheme by the Porte and later supported the Russian proposals because they did not contradict the British interests. Britain's conduct was based on realpolitik and on a desire for achieving of more or less stable relations between Great Powers.